

Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
(1 մայիս 1983 թ.)

Երջանիկ ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն վերստին ձեր համագումարին հղելու Մեր ողջույնի և օրհնության խոսքը: Վստահ ենք, թե բոլորդ անխտիր, բարեջան սպասավորներ մեր առաքելական Մայր Եկեղեցվո, այս տարի ալ ձեր համագումարին կներկայանաք ձեր հոգեշեն գործունեության բեղուն արդյունքներով և կպատրաստվիք ներկայացնել նոր ծրագիրներ և նոր առաջադրանքներ, որպեսզի ձեր աղոթքի Տուները հետզհետե առավել առատորեն բաշխեն իրենց խորաններեն շնորհները Սուրբ Հոգվույն, և որպեսզի ձեր հոգևոր խնամքին հանձնված հավատացյալներու կյանքը հետզհետե առավել լուսավորվի Սուրբ Ավետարանի լույսերով և որպեսզի հետզհետե առավել արդյունավետ դառնան ձեր ջանքերը՝ նոր սերունդներուն ջամբելու հայ ոգեկանության անկորնչելի հոգևոր ու մշակութային արժեքները:

Սիրելիք Մեր, շարունակեցեք ձեր նվիրական առաքելությունը անսասան հավատքով, չնվազող եռանդով, հոգևոր կարգապահությամբ, համախումբ ձեր գերաշնորհ առաջնորդ հոր հովանիին և առաջնորդության ներքև:

Մեր սերը, Մեր գնահատանքը, Մեր քաջալերանքը ձեզի ամենուդ այժմ և միշտ:

Շնորհք և ողորմություն բարյաց պարգևատու Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ:

«Արդ մի՛ մերժէք ի ձէնջ վհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն. զի զկամն Աստուծոյ արարեալ, հասջիք աւետեացն» (Եբր. Ժ 35—36): Ամեն: